

10477

891.93

14-17

1912

Ս Օ Գ Ի Ի Թ Լ Ե Ց Ի .

# ԲՆՂԴԻ ԳԱՆԳԱՏ

Գ Բ Ե Ց

*Դպիր Մարգար Խալաթեան*

2003

227

ՈՒԷՅԱՆՆԵՐԱԳՈՒԼ.

Տպարան Յակովբ Դառապեանցի

1913

891.99  
11-17



APM.  
2-751a  
891.33  
14-17

248

4861044400

Ս Օ Գ Ի Ի Թ Լ Ե Ց Ի .

ՀԱՐՇԱՐ ԻՐ ԲԱԳ

ԲԱՂԴԻ ԳԱՆԳԱՏ

85/2

Հ Ա Ղ Ե  
Հանրային գրադարան

Գ Բ Ն Ց  
Դպիր Մարգար Խալաթեան

Հ Ե Ց Ի

Հ Ա Ղ Ե  
Հանրային գրադարան

Գ Բ Ն Ց  
ՄԱԿՍՍՆՅԱՆ  
Տպարան Յակովբ Ասապեանցի  
1912

Handwritten signature



Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն.

Քաղաքի գանդատ գրքոյկս բաղկացած է բանաստեղծական  
ոտանաւորներով

Իսկական կատարած ճակատագրի հարուածներով.

Պատահական և փորձուած շատ հարկաւոր խրատներով,

Կեանքի շրջան նկարագիր բաղմատեսակ աղէտներով,

Յանուրջներից արտագրեալ ջերմ աղօթքներ տեսիլներով,

Անգին ծաղիկ փունջ մանուշակ վարդ պալատսան գոհար-  
ներով,

Զիրակ դաշտի մանուկ մատաղ արտասուած թոր աչիկներով,

Լեառն Արագած օդն ու ջուրը Սօգիւթլուայ աղբիւրներով.

Վերնատան սէր պատկերացում կարճ և աղտու տողիկներով.

Հողագործը երաշտ տարին սնունդ առաւ մեղուններով,

Քարութեան մէջ ձիրք ստացայ բաղդ շունեցայ ընկեր-  
ներով.


Մատնիչ մարդու դէպքեր դասեմ զգուշացէք խորհուրդներով

Հեղինակի անունն ասեմ իմաստալից հատիկներով,

Դպիր Մարգար խալածեանի աշխատասէր գրիչներով,

Պատկերն էլ հեա փոքր դիւրով նկար տեսէք ծաղիկներով.

44906 - ան.



29490-63



ՏԵՍՆԻՄ ԳՐՊԱՆՍ ՓՈՂ ՉԿԱՅ.

Բաղդիս մասին միշտ գանգատեմ.  
Թշուառաց օգնող մի հատ եմ.  
Օտար երկիր որքան դադիմ.  
Տեսնեմ գրպանս փող չկայ:

Արդար քրտինք որքան թափեմ.  
Ոտքով երկիր եթէ չափեմ.  
Հարիւր հարուստ մէկէն խափեմ.  
Տեսնիմ գրպանս փող չկայ:

Հազար եղինք եթէ ծախեմ.  
Մեղաւորին մեղքով կախեմ.  
Երկաթ գուտ ոսկու հետ փոխեմ:  
Տեսնիմ գրպանս փող չկայ:

Գարնան գետեր որ ինձ լինի.  
Աշխարհ խմեն ինչպէս գինի.  
Եթէ ծախեմ հարիւր ամի.  
Դարձեալ գրպանս փող չկայ:

Ամէն տարի ես օտար տեղ.  
Հարիւրներով զրկում եմ գեղ.



Վարքով արդար գործով անմեղ.  
Տեսնիմ գրպանս փող չկայ:

Համոզուած եմ Շիրակ գնալ.  
Փոքր միջոց այն տեղ մնալ.  
Սիրոյ բարև բոլորին տալ.  
Հիմա գրպանս փող չկայ:

Ե Թ Է Լ Ի Ն Ի.

Քայլ և գառինք երբ մէկ լինին.  
Մասսի գլխին թէ ինչ տանին,  
Հարիւր վարպետ այն տեղ բանին.  
Փողի մասին չեմ գանգատի:

Մովսէս կրկին թէ աշխարհ գայ.  
Ծով անցներով ինչ բարև տայ.  
Իէպի Սինայ սար բարձրանայ.  
Փողի մասին չեմ գանգատի:

Սողոմոնի տաճար գաւիթ.  
Աստուածածին հետը Դաւիթ.  
Տեսնիմ աչքով ինչպէս հովիտ.  
Փողի մասին չեմ գանգատի:

Զինաց լիզու թէ ես խօսիմ.  
Գործով ինչ մեղաւոր դասեմ.  
Ինչ որ գիտեմ արդարն ասեմ.  
Փողի մասին չիմ գանգատի:

Շիրակ դաշտի ցորեն գարի.  
Հնձեն ինչ տան հարիւր տարի.  
Եթէ բերքը լինի բարի.  
Փողի մասին չեմ գանգատի:

Յուզվար ամսի բոլոր ձիւնը.  
Սլիւր լինի գայ մեր տունը.  
Յերեկ հանգիստ գիշեր քունը.  
Փողի մասին չեմ գանգատի:

Մանկութեան օրերից տաղեմ.  
Եթէ երգեմ ձայնով կողեմ.  
Մինչև վերջ թէ կեանքով սաղեմ.  
Փողի մասին չեմ գանգատի:

Մոլոր մտօք կարգող մարդը.  
Զի հասկանայ խօսքի վարդը.  
Նորա գլուխ ժայռի սարդը.  
Յաճախ դառն է իւր կոկորդը:



Նորահաս մանկան տաս գիրքը.  
 Հասկանումէ ամէն գիրքը.  
 Տգէտ մարդին պատուի տուրքը.  
 Ձի իմանում սայրասուրքը:

Ով որ անգործ է ծառի տակ.  
 Միտքը մոլոր է անգիտակ.  
 Տանը չունի վառած ճրագ.  
 Միշտ մարած է թոնիր կրակ:

Մեծափափակ հեղինակ շարիր անձին.  
 Նմանումէ ջրի լուզակ լճերին.  
 Համեստ անձը շահ է տալիս գործերին.  
 Ձի հասկացող հաւասարէ կախարդին:

Այս գրածս է ճիշտ մի տարի.  
 Տուն իջայ դատաւորի.  
 Ձէր ճանաչում չարն ու բարի,  
 Որովհետեւ կուտէր դարի,

Մի գիւղ տեսայ բոլոր հարուստ,  
 Շքեղ չորս հարիւր տան ապրուստ,  
 Գրագէտ չգտայ դրուստ,  
 Երկիւղ գողի չկար կորուստ:

Մի գիւղ թւով հինգ հարիւր տուն,  
 Տեսնող կարծումէր հաւի բուն,  
 Առանց կողինք լինումեն բուն,  
 Բոլոր ուսեալ միտքեր արթուն:

Մի տուն տեսայ վեց աղջիկներ,  
 Ձիեր հեծան առին գէնքեր,  
 Արշաւեցին բարձր սարեր,  
 Մայրը հփում էր խորտիկներ:

Խ Ն Դ Բ Վ Ա Ծ Ք.

Առաւօտեան արշալոյսին,  
 Աղաչում եմ տէր Յիսուսին,  
 Ինձ լաջորդէ դէպի բարին,  
 Որ չի խփէ բազդս քարին:

Տէր անմեղին դու ազատէ,  
 Դու քաջ գիտես ով որ վատէ,  
 Շատեր չար են և անողոք,  
 Խնդրում եմ լսես իմ բողոք:

Գէորգ որդուս և Վռամին,  
 Օգնէ բարի լուսոյ ժամին,



Աղաչումեմ զօրավարին,  
Անփորձ պահէ բոլոր տարին:

Ողորմութեանդ դռները բաց,  
Քաղցած մարդկանց տուր առատ հաց,  
Բժիշկ դու ես նեղ հիւանդաց,  
Քո ծառայն եմ բացէ ի բաց:

Ի Մ Գ Ր Ի Զ.

Իմ սիրելի գրիչս շնորհիւ ս'և ս'և տողերը,  
Գրիր արագ և եռանդ աննկարագրելին ցոյց  
արա,

Լայնածաւալ սուպրէզդ բաց արա,  
Սրտիս խորքերից ջերմաջերմ իղձս ծանուցում  
արա,

Օտար եղբօր լիշիր գրով,  
Ուրախ ժամին տուր նուէրս:

Ն Ա Մ Ա Կ Գ Է Պ Ի Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք.

Նախ գրումեմ կեանքիս մասին շարունակ,  
Գործիս ընթացք ճիշտ լինումէ յաջողակ,

Գտնուում եմ Յիսուս Տէրի ձեռքի տակ,  
Լիայոյս եմ որ կատարուի բոլոր սրտիս նպատակ:

Պեանքս ողջէ ցանկանումէ ձեզ բարի,  
Ազգով որդով սեղան նստիք նոր տարի,  
Միւս թւին պատրաստեմ ճանապարհի,  
Տէրն ինձ օգնէ և խնամէ անչարի:

Սիրոյ բարև ծերունի հայրիս մայրիս,  
Սիրելի պատվական միակ եղբայրիս,  
Հարս ու աղջիկ մեծին փոքրին Գէորգիս,  
Եւ դրացի Աբրահամի սիրուն որդի Յովսէփին:

Փեսայ Բատալ բարևի ձայներ լսէ,  
Իմ կողմանէ բրոջս ողջօյն ասէ.  
Որդկերանցդ մաքրափալլ գերագասէ.  
Զգուշացիր եկող շաբաթ պասէ:

Գպիր Մեսրօբ և Հայրապետին բարև,  
Պեանքով երկար որդով կանաչիք տերև,  
Զի մոռանաք ուղարկէցէք ինձ բարև,  
Սիրտս բացուի ինչպէս որ պայծառ արև:



Արժանանանք մէկսեղանով մէկ հանդէս,  
 Առանց նամակ սպասելով եմ այսպէս,  
 Ողջութիւնս ճանաչեցէք այս գրէս,  
 Հայրենի հացը քաղցրէ թւում մեղրի պէս:

Մ Ա Տ Ն Ի Չ Մ Ա Ր Գ .

Մատնիչ մարդնէ առանց վախ,  
 Բարև կտայ գլուխ կախ,  
 Գալլի պէս գնում փարախ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Մանէ գալիս միշտ ձախ ու աջ,  
 Պարկը ուսին էշը առաջ,  
 Զի հաւատում Սուրբ կենաց խաչ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Նա գնումէ շատ ճանապարհ,  
 Մատնութեան գործերի համար,  
 Բարեկամաց թէ պատահար,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Տեսնողը կարծումէ փաշայ,  
 Իշխանների հետը ղոշայ,

Ճարպիկ լեզուն քար կտաշայ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Համբուրումէ Յուդայի պէս,  
 Ոտքով ձեռքով կանէ այնպէս,  
 Քիթը երկար ծռուած է դէս,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Աչքեր կապույտ երես մրոտ,  
 Մօտից կըգայ գարշելահոտ,  
 Կպատահի չոլախէ ոտ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Շորեր ունի տեսակ տեսակ,  
 Մագեր խուճուճ կարճահասակ,  
 Պատմութեամբ ճանաչիր վասակ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Աչքեր շարժում արագ, արագ,  
 Զայնը այծի պէս բարակ,  
 Գլուխ տափակ ինչպէս մարագ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:



Ձեռքեր հաստէ կորճ մատներով,  
 Բարակ և երկար ոտներով,  
 Կուրծքը հաստէ շատ մազերով,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Պատկերից էլ նկատուումէ,  
 Չար խորհրդով ականակուումէ,  
 Արդար անմեղ ձեանումէ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Լաւ ծանօթէ խմելու հետ,  
 Յարգանք պատիւ թափումէ գետ,  
 Ձեռքը ընկաւ կխփէ նետ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Նրա սրգիք շատ հպարտ են,  
 Ուսման արհեստից ազատեն,  
 Դրացու գէմ միշտ էլ վատեն,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Եթէ յատուկ փորձով ասեմ,  
 Կատարած գործերից դասեմ,  
 Քեզի կասէ մեղքից պասեմ,  
 Զգուշացիր լաւ իմացիր:

Խ Ր Ա Տ.

Մտիր դպրոցը հնագանդ վարքով,  
 Աւարտառ ուսման հմուտ սուրբ գրքով,  
 Համբերող եղիր ամէն մէկ կարգով,  
 Գիւղը բնակուի զարգացուր շարքով:

Գիտութեան տէր ես մի լինիր հպարտ,  
 Ազնիւ հարուստ ես վճարէ քո պարտ,  
 Հանճարով խօսի որ չընկնիս թակարդ,  
 Սրտով չտխրիս բացուիր օրպէս վարդ:

Խրատ առ հօրից պարծանք եղբօրից,  
 Հաւատով ապրիր շնորքնէ տէրից,  
 Զգտիր բարութեան լաւես բոլորից,  
 Փառքով մեծացիր հմուտ քաջացիր:

Ա Պ Ի Կ Ո Ն Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն.

Երեսուն ամաց մի պրի կին,  
 Յոյրը գրեց փոքր որդին,  
 Նա չ'ցանկաց երկրորդ մարդին,  
 Փողեր կերան սրբին բերան:



Որդու փողեր ձեռքը առաւ,  
Պատուով տուեց կուով առաւ,  
Հայհոյելով կեանքը վառաւ,  
Փողեր կերան սրբին բերան:

Տոկոս գրին փողեր տարան,  
Եթէ պահանջէ մէկ բերան,  
Ցոյց են տալիս ճիշտ դադարան,  
Տարան կերան սրբին բերան:

Փողեր գնաց անյետադարձ,  
Գլխին գրեցին կակուղ բարձ,  
Ձեն համարէ մի փոքր վարձ,  
Տարան կերան սրբին բերան:

Մեռած կորածներ շարէ շար,  
Ոմանք արին հոգու պաշար,  
Ինչպէս հովիւ բարձրանում սար,  
Տարան կերան սրբին բերան:

Առած ժամին խոնարհ որդի,  
Հագած ունի գայլի մորթի  
Վերջ կխօսին ինչպէս քրտի,  
Առնող չի տայ կուզէ ուտայ:


Քրքոյ մնաց երեք տարի,  
Փող ստացաւ առաւ գարի,  
Գործ կհասնի դատաւորի,  
Առնող չի տայ կուզէ ուտայ:

Խազալ Աբգար երաշխաւոր,  
Հէնցը կերաւ ինչպէս քաւոր,  
Սեփանի կին ուրացաւ չոր,  
Առնող չի տայ կուզէ ուտայ:

Մէկ բարեկամ լաւ նամուսով,  
Հինգ թումանի հաշիւեց կով,  
Կարճ կարպետ իրան չափով,  
Փողը տարաւ ձեռքի ափով:

Բաղդաւորին արեց բարիք,  
Չորս թուման էր նրա կարիք,  
Շատերն էլ գործում են չարիք,  
Առնող չիտայ կուզէ ուտայ:

Ծանօթացիր ուշուկ ուշի,  
Աբգար տարաւ գնաց Շուշի,





Գէորգ առաւ հարսին փուշի,  
Առնող չի տայ կուզէ ուտայ:

Աւետիս իւր եղբայր կարգեց,  
Փառաւոր հարսանիք սարգեց,  
Անոյ փողով էրան յարգեց,  
Առնող չի տայ կուզէ ուտայ:

Մէկը առաւ խելքից տգեղ,  
Կինը զարդարվածէ շքեղ,  
Գուժար ուտող զրմզլի գէղ,  
Առնող չի տայ կուզէ ուտայ:

Շատ չարչարեց սեւա չորեր,  
Անցաւ երեք տարուայ օրեր,  
Կով ստանող գնաց ձորեր,  
Առնող չի տայ կուզէ ուտայ:

Աննան ձիով և շատ արագ,  
Բարսեղ առաջ ինչպէս բարակ,  
Փողեր հաշիւէ պատարագ,  
Տարան կերան սրբին բերան:

Հ Ի Ն Գ Փ Ե Թ Ա Կ Մ Ե Ղ Ո Ի Ն .

Մտքով տատանուում եմ անհացահատիկ,  
Սրբութեամբ պահեցի հինգ նաւակատիկ,  
Կուշտ փորով հաց կերայ ապրիլին զատիկ,  
Զմռան պաշար մնաց հինգ փեթակ մեղուն:

Յանաճս արտերը չորացան անջուր,  
Տարուայ աշխատանքս կորցրի իզուր,  
Յանաճ ժամին ասի մէկին հազար տուր.  
Զմռան պաշար մնաց հինգ փեթակ մեղուն:

Գութանով հերկեցի սարադաշտի հող.  
Զորս եզան գին ցորեն սերմեցի այդ կող,  
Վերջի ժամին տեսայ սիրտս առաւ դող:  
Զմռան պաշար մնաց հինգ փեթակ մեղուն:

Հողագործ էր պապս գիւղական շարքին,  
Ողորմած ձեռք ունէր խեղճ դասակարգին,  
Եկեղեցի շինեց պայծառ թանկագին,  
Զմռան պաշար մնաց հինգ փեթակ մեղուն:

Յ Ա Ն Կ Ա Յ Ո Ղ Թ Շ Ո Ի Ա Ռ Կ Մ Ն Ա Յ

Հայրենիքի տգէտ մարդը,  
Թշնամու լարած թակարդը,



Կեղծ բարեկամի նուէր զարդը,  
Տեսնողը թշուառ կըմնայ:

Ամբողջ գիշեր մանեկողի,  
Ոսկի արծաթ ունող գողի,  
Ճանապարհորդ առանց փողի,  
Ցանկացող թշուառ կըմնայ:

Չստացողը խրատ մանկութեան  
Չունեցող արհեստ գիտութեան,  
Առատ գանձեր շուայլութեան,  
Կորցնողը թշուառ կըմնայ:

Սանձ չունեցող կառապանը,  
Անգործ երկար լինել տանը,  
Անտէր և անպաշտպան խանը,  
Նստողը թշուառ կըմնայ:

Երաշխաւոր բարեկամին,  
Շատաշրջիկ չարակամին,  
Մտքից կոյրին լուսոյ ժամին,  
Հետևող թշուառ կըմնայ:

Անալէկոծ խաղաղ ջուրը,  
Անզգամի տուած լուրը,  
Պաշտպան լինող ձեռքի սուրը,  
Հաւատող թշուառ կըմնայ:

Անգաղափար սիրուն կինը,  
Կաղ ոտքերով նժոյգ ձինը,  
Կարկտահարած այգինը,  
Սուտողը թշուառ կըմնայ:

Մութ գիշերով ճանապարհը,  
Աւազակաց խմբի պարը,  
Ձրի սեղան ներկայ դարը,  
Գնացող թշուառ կըմնայ:

Կոպիտ անբան յամառ ուժով,  
Գլուխ դատարկ սիրտը խռով,  
Առանց հաւատի ապահով,  
Հաճեցողը թշուառ կըմնայ:

Գիշեր ու ցերեկ միշտ քնող,  
Սովոր ձեռք գողութիւն անող,  
Կոյրը ճանապարհից հանող,  
Մերձեցողը թշուառ կըմնայ:



Անմեղաց արիւն թափողի,  
Կեղծ սրտով արդար խաբողի,  
Գինեմուլ անկող լափողի,  
Ընկերող թշուառ կրմնայ:

Պանդխտու թիւն շատ մնալը,  
Ձեխական կեանքով գնալը,  
Անտուն անտեղ ուրախանալը,  
Կատարող թշուառ կրմնայ:

Հսկող հովիւ երբ մեռանի,  
Պաշտօնն առնի մի պատանի,  
Ել ճանապարհ չգտանի,  
Ժողովուրդ թշուառ կրմնայ:

Հողագործ թէ գութան ծախէ,  
Արքայութեան դուռ չբախէ,  
Կաշառք առնի արդար կախէ,  
Այսպէսնէլ թշուառ կրմնայ:

Աշխարհ չարն ու բարին խառնէ,  
Չարի համար խարոյկ վառնէ,  
Մարգար եթէ բարին չառնէ,  
Յաւիտեան թշուառ կրմնայ:

Դ Է Պ Ի Ս Օ Գ Ի Ի Թ Լ Ո Ւ .

Հաւատովս հաւատամ իմ ոտովս դամ,  
Տարին երեք անգամ դէպի Սօգիւթլուն:

Սօգիւթլու շինեաճէ Արագած լեռան մօտ,  
Ջարգարուած ծաղկունքով բուրմանուչ հոտ,  
Դրախտի գաւիթէ հարաւ ստորոտ,  
Սառ ու վճիտ աղբիւրք գէպի Սօգիւթլու:

Հիւանդոգ հարուստը թէ ծանօթ լինի,  
Երկու հազար ճանապարհածախս կանի,  
Բաժակով ջուր խմէ փրկութիւն ունի,  
Գիշեր ու ցերեկ ո՛հ դէպի Սօգիւթլու:

Լուսաւորչու անուամբ մի այր ուխտատեղ,  
Ջուրն ու օդը բժիշկ ամէնից շքեղ,  
Տեսաբանէ կեանքը յատուկ փառահեղ,  
Վարդավառի տօնին դէպի Սօգիւթլու:

Եկեղեցին ասեմ այդ գիւղի միջին,  
Քարաշէն սրբատաշ կամարն առաջին,  
Թագէոս առաքեալ օծեալ Սուրբ աջին,  
Իղձս մեծէ կրկին դէպի Սօգիւթլու:



Բնակիչքը յատուկ հողագործ վարպետ,  
Սերմանում են առատ ջրումէ ջրպետ.  
Վարդավառի տօնին վաճառ Կարպետ,  
Շիրակ ամարանոց դէպի Սօգիւթլու:

Պ Ա Ռ Ա Ի Ի Ա Ղ Օ Թ Ք.

Տէր, տուր մեզ լիառատ ցանկալի տարի,  
Անփորձ անսայթակ շնորհէ բարի,  
Յորեն հաց շատ տուր որ չուտենք գարի,  
Մաղթանքս այսէ մշտապէս բարի:

Յատումներ հեռանան անձրևներ շատ գան.  
Պտուղներ այն քան մէկին հազար տան.  
Հողագործ մարդիքը սրտով լիանան,  
Զորեր գաշտի հետ ցորենով բարձրանան.

Բարեգործ անձերը լինին անպակաս.  
Մանրիկ տղերքը շարվեն դասէ դաս.  
Աղօթքն ու մաղթանքը որ միշտ կստանաս,  
Հիւրասէր (սլառաւին) Աստուած դու կեանք տաս:

Տ Ե Ս Ի Լ Ք.

Անտառապատ լեռան կողմն արևելեան.  
Տեսիլքս երազիս հրաշք տէրունեան.

Եկեգեցին պայծառ աղօթք փրկութեան,  
Անթառամ ծաղիկը լուսով ես տեսի:

Աստուածածին հանդէս միջնորդէր փրկչին,  
Հայրապետաց մաղթանք ի սէր սուրբ խաչին,  
Աշխարհի ազատում հօտը արեան գին,  
Անթառամ ծաղիկը ամպով ես տեսի:

Զօրութիւնք երկնային պարառեալ կային,  
Նուէր մատուցողքը միաբան լային,  
Փակած դուռը բացաւ ջահեր է վառին,  
Անթառամ ծաղիկը փառքով ես տեսի:

Սնողսրմ, մարդիկը շարքով ծնկաչօգ,  
Անմխիթար սրտով ընկած բազմահօգ,  
Տիրամօր կաղաչեն իւրաքանչիւր ոք,  
Անթառամ ծաղիկը պայծառ ես տեսի:

Ս Է Ր.

Տէր տուր իմ ազգիս սէր անբաժան գորով.  
Գործենք քեզ հաճոյ միաբան սիրով,  
Ազատենք վշտից ուրախանանք տարով,  
Յնճանք քո փառքով սիրով հազարով:



Տիրութեան պատիւ սիրով ճանաչենք,  
Բարիքների մէջ դէպ քեզ աղաչենք,  
Խուժան ազգերը տեսնին, ամաչեն,  
Առանց սէր կրօնի լեզուք ոչինչեն:

Ծագիր մեզ վերայ վերնատան սէրը,  
Յորդանան գետում մկրտուած տէրը,  
Շատ անգամ բացիր զիմով ժամերը,  
Մեծացուր սիրով դառանք ծերերը:

Ուերն է առատ բարութեան մէջ.  
Միշտ նուազէ չարութեան մէջ,  
Ընթանումէ միութեան մէջ,  
Իսկ աղբիւրն է սուրբ գրքի մէջ:

Ծ Ն Ն Գ Ե Ա Ն Տ Օ Ն Ի Ն .

Ուերախ ժամէ փրկչի մասին,  
Երգենք այնպէս հովուաց դասին,  
Առաւօտեան արշալոյսին,  
Տօն կատարենք տէր յիսուսին:

Արժանանանք սուրբ յարութեան,  
Առաջ և երկրորդ գալստեան,

Վարդավառի պայծառութեան,  
Այսօր տօնէ մեր փրկութեան:

Կոյս Մարիամ երանելին,  
Մանուկ ծնուեց բէթղէհէմին,  
Ծնկաջօք համբուրենք տէրին,  
Որ մեզ օրհնէ ի սուրբ լերին:

Ես տիրացու սուրբ Մինասի  
Եւ աշակերտ Յովհաննէսի,  
Միշտ աղաչող Քրիստոսի,  
Այսօր տօն է տէր Յիսուսի:

ԵՕԹԸ ՏԱՐՈՒՍՅ ՊԱՆԿՈՒՄՏ

Մանկութիւնից դժբախտ վիճակ ինձ տիրեց,  
Որբ ու պանդուխտ շրջել ճակատիս գրեց,  
Կարգալու գրելու փափակս մօրեց,  
Եօթը տարի անտես կարօտ հայրենիս:

Սիրտս բաղձանքով լի թուչել է ուզում,  
Հայրենիք ասելով աւաղէ կանչում,  
Ողբ ու հառաչանքի ձայներէ հնչում.  
Եօթը տարի անտես կարօտ հայրենիս:



Գեղեցիկ պատկերս այսօր տխրագին,  
 Հայրենիքը տեսայ գիշեր երազին,  
 Երկինքը իւր գիրքով խաւարէր լուսին,  
 Եօթը տարի անտես կարօտ հայրենիս:

Անգուժ բաղտը կեանքս այսպէս խանկարեց,  
 Աբգար պետրոսեանիս ճրագը մարեց,  
 Ես պատմեցի իմ մեծ եղբայրը գրեց  
 Եօթը տարի անտես կարօտ հայրենիս:

Ն Ո Ր Տ Ա Ր Ի .

Եկաւ անցաւ ամբողջ տարին,  
 Որքան սպասեցի նորին,  
 Թողնելով չար գործի բարին,  
 Այսօր մտայ ի նոր տարին:

Գնա՛ չգա՛ անցեալ տարին,  
 Խաւար ածեց օտարներին,  
 Գործով հանգիպեցայ չարին,  
 Այսօր մտայ ի նոր տարին:

Աղաչեցի կենարարին,  
 Օգնութիւն տուեց տկարին,

Առաջնորդեց դէպի բարին,  
 Այսօր մտայ ի նոր տարին:  
 Առաջնորդէ դէպի բարին,  
 Այսօր մտայ ի նոր տարին:

Հնից ելայ մտայ նորին,  
 Յոյսս դնեմ բարերարին,  
 Անփորձ պահէ իւր Մարգարին,  
 Այսօր մտայ ի նոր տարին:

ՀԱՅ ՄԱՆԿԱՆԸ ՄԻ ԹՈՂԻՐ ԼԱՅ,

Մանուկ օրոցում քնածէ  
 Հիւանդոգ մօրից ծնածէ  
 Եղբօր ձեռքով սնուցածէ,  
 Հայ մանկանը մի թողիւր լայ:

Բուրաստանի մեծ ծառի տակ,  
 Մանուկ նստած է անճարակ,  
 Հայր արբահամ զուարակ,  
 Հայ մանկանը մի թողիւր լայ:

Հայրն ու մայրը մեռած են անդ,  
 Մանկիկ մնացածէ պատանդ,



Օգնական եղբայրն է հիւանդ,  
Հայ մանկանը մի թողիր լայ:

Գեղեցիկ պատկեր երեսին,  
Նման տասն հինգ օրեայ լուսին.  
Սիրող Աստուածածին կոյսին.  
Հայ մանկանը մի թողիր լայ:

Երկու եղբայրեն մէկ մօրից.  
Տասն երկու եղբայրեն հօրից,  
Հային խնդրում բարերարից,  
Հայ մանկանը մի թողիր լայ:

Ճօխ սեղանի նստող եղբայրք  
Ողորմած հարուստ բարերարք.  
Մտածեցէք օգնութեան կարգ.  
Հայ մանկանը մի թողիր լայ:

Մանուկ լալիսէ յարածամ,  
Որ չի տեսնում իւր բարեկամ,  
Երջպատած են չարակամ.  
Հայ մանկանը մի թողիր լայ:

Պ Ա Ն Դ Խ Տ Ի Ե Ր Գ.

Իմ կեանքի շրջանից գրում եմ այսպէս,  
Այսօր ուրախ գուարճ, սիրտս մաքրապէս,  
Ընկերական խմբով, ճօխ սեղան հանդէս.  
Գինու բաժակ ձեռիս յիշեմ հայրենիք:

Վատ օրեր անցկացան բարիք մօտեցան,  
Երգ ու մաղթանքներիս ընկերք ցնծացան,  
Սրտիս ջերմ աղօթքներ երկինք բարձրացան.  
Գինու բաժակ ձեռիս յիշեմ հայրենիք:

Հայրենիք դառնալուս ժամը հասածէ.  
Կարիքներիս մասին լրում տուածէ,  
Օտարութեան վերջին պայման զրածէ  
Գինու բաժակ ձեռիս յիշեմ հայրենիք:

Աշխատասէր սրտով ջանքով,  
Միշտ առողջէ բոլոր կեանքով.  
Փառք կստանա մեծ պարծանքով.  
Մեղուն ու վարդ հանճարեղ մարդ:

Յոյլն ու ծոյլն ապրում են ցած,  
Անձեր հիւանդ փորեր սոված,



Աչքի առաջ բացէ ի բաց,  
Մեր տիրացուն Տէրտէրացուն:

Արագ ու քաջ մանուկները,  
Արեգակին մուխ օրերը,  
Մաքուր գեղեցիկ շրերը,  
Ինչպէս գրսից այնպէս ներսից:

Անգործ մարդին կասէն անգէտ,  
Հարբեցողին թշուառ տգէտ,  
Հինգ հովիւներ անգրադէտ,  
Ամբողջ դասից քառորդ մասից:

Հ Ա Յ Տ Ի Ր Ա Յ Ո Ի Ն.

Տիրացուական կեանքի մասին,  
Անապահով տիրած դասին,  
Թշուառ ընտանիօք միասին,  
Ճնշուածէ հայ տիրացուն:

Վարքով բարքով թէ գովանի,  
Բարձր ուսեալ վարժարանի,

Դարձեալ պատիւ ոչ գտանի,  
Ճնշուածէ հայ տիրացուն:

Ընծայացուք հայ գիւղերին,  
Հպատակ փողի տէրերին,  
Իշխաններին տէրտէրներին,  
Ճնշուածէ հայ տիրացուն:

Թէ ծառայէ քսան տարի,  
Ամէն կողմով լինի բարի,  
Կամք կատարէ բարերարի,  
Ճնշուածէ հայ տիրացուն:

Այդ դասում չկայ բաղտաւոր,  
Հազած լինի գեղեցկաշոր,  
Միրուք սպիտակ օլեօր,  
Ճնշուածէ հայ տիրացուն:

Որքան հմուտ և ձայնաւոր,  
Մայրաքաղաք հռչակաւոր  
Քահանայից երաշխաւոր,  
Ճնշուածէ հայ տիրացուն:



Վարքից ընկածէ անունով,  
 Զայն է ծախում էժան գնով,  
 Սոված է իւր ամբողջ տնով,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Ծառայութեան չորրորդ մասը.  
 Կատարող տիրացւի դասը,  
 Տէրտէրից է մեծ վնասը,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Գիւղեր ասեմ իրանց կարգին,  
 Հոգէ հացը իրա շարքին,  
 Սեւազլուխ նախանձ վարքին,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Քաղաքների մեծ դպրապետ.  
 Կաք ու կռիւ տէրտէրի հետ,  
 Հազած ունի մի հին կապերտ,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Ճնշուած է ստրուկի պէս,  
 Ծառայումէ նոր հարսի պէս,  
 Տխրալի դէմք դառնումէ կէս,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Հայթայթումէ օրուայ պարէն,  
 Հեռու կամայական չարէն,  
 Ոչխարների ղեկավարէն,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Ղեկավարի սուր կերպարանք.  
 Հարցն մերոց բանադրանք.  
 Պաշտօնական արհամարանք.  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Մեռաւ մեծատան հարուստը.  
 Սուտ գանձեր և հագուստը,  
 Քահանէն ճարեց ապրուստը,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Տիրացուական դասի միջին,  
 Իպիր սիրական առաջին,  
 Բողոք ունի մինչև վերջին,  
 Ճնշուած է հայ տիրացուն:

Գ Ո Ր Ծ Ո Վ Ա Ջ Ն Ի Ի .

Ազնիւ մարդը միշտ փայլումէ,  
 Ամէն գործով գեղեցիկ,



Ձեռնարկ տեսնող զմայլումէ,  
Բճեր չունի մի հատիկ:

Ձի ճանաչում նա խտրութիւն,  
Բարի աչքով է ակնարկում,  
Երբէք չունի մի կեղծութիւն,  
Մեծ համբաւներ է ուղարկում:

Ազնիւն ունի մեծ պարտէզներ,  
Բոլոր պտուղներ բարեհամ,  
Փնտրումէ յատուկ մշակներ,  
Հանճարով ես տես խաս ու խամ:

Հաւատարիմ և ճշմարիտ,  
Լեզուն պատուական մարգարիտ,  
Փորձով գիտէք մարդի լաւը,  
Ինչպէս բրդի ձեռքի կաւը:

Չ Ո Ր Ս Ե Ղ Ա Ն Ա Կ

Ձմեռ եկաւ սաստիկ ձիւն,  
Պարիսպ կանգնեց ինչպէ՞ն սիւն,

Ով թշուառ էր ծածկեց տուն,  
Խաղաղ մտօք մտաւ քուն:

Գարնան գետեր յորդահոսան,  
Անձրևների օրեր հասան,  
Սիրուն ծաղիկներ բալասան,  
Հողագործներ արօր տեսան:

Ամառ շոքեր մարդկանց անճառ,  
Հաւաքուեցան ինչպէս կաճառ,  
Առատ տեսանք սիրմանիք խառ,  
Ձոհեր արինք անարատ գառ:

Աշուն երևաց շատ քամի,  
Խաղող գինի լի այս ամի,  
Շատ պսակներ գիշեր ժամի,  
Ջբաղուեցանք հեքիաթով մի:

Ա Ջ Ն Ի Ի Ը Ն Կ Ե Ր Չ Պ Ա Տ Ա Հ Ե Ց

Շատերի հետ ընկերացայ,  
Շատերին բարի ցանկացայ,



Բարութիւնով ձիրք ըստացայ,  
Ազնիւ ընկեր չ'պատահեց:

Շրջան մտայ բանաւորաց,  
Պաշտօն տեսայ արհամարաց,  
Լարած թակարդ էր հնարած,  
Ազնիւ ընկեր չ'պատահեց:

Մաղթանք արի ճանապարհի,  
Որ ինձ ընկեր լինէր բարի,  
Կամք կատարենք բարերարի.  
Ազնիւ ընկեր չ'պատահեց:

Դաշտում ելայ խոտ հնձելու,  
Սեղան նստայ հաց ուտելու.  
Երբ վեր կացայ աղօթելու,  
Ազնիւ ընկեր չ'պատահեց:

Ծեր մարդկերանց գործով տեսայ,  
Հարսանեաց տուն քաւոր փեսայ,  
Դաւիթն էլ Դանիէլի պէսայ,  
Ազնիւ ընկեր չ'պատահեց:

Հ Ի Ն Ո Ի Խ Տ.

Աստուած Նոյին արդար տեսաւ,  
Տապան շինել չափով ասաւ,  
Երբ որ ժամանակը հասաւ.  
Նպատակ աշխարհ ջնջելն էր:

Հայր Աբրահամ տէրին խօսեց,  
Սուրբ որդու վզին քսեց,  
Երբ վերեւից ձայնը լսեց,  
Նպատակը զոհ անելն էր:

Սահակ ունէր Յակոբ Եսաւ,  
Տէրն Յակոբին Իսրայէլ ասաւ,  
Երբ տասն երկու որդիք տեսաւ,  
Նպատակը մեզ փրկելն էր:

Մովսէս Եգիպտոս ծնաւ,  
Փարաւոն կնոջ մօտ սնաւ,  
Երբ թագաւոր չուզեց բնաւ,  
Նպատակը սպանելն էր:

Մորենին որ տեսաւ Մովսէս,  
Ոտքով բարձրացաւ սարի կէս,



Երբ գաւազան առաւ այսպէս,  
Նպատակը կարմիր ծովն էր:

Ն Ո Ր Ո Ի Խ Տ.

Մեր Յովհաննէս առաքեալին,  
Զիթով կաթսայի մէջ հալին,  
Ողջ դուրս եկաւ երանելին,  
Յետոյ մեռաւ իրան ժամին:

Հայրապետներ մեծ գումարով,  
Երեք հարիւր տասն ութ թուով,  
Նիկեայ քաղաք ժողովելով,  
Լուսաւորիչ երկու որդւով:

Լուսաւորչու օծեալ աջը,  
Վարդան Մամիկոնեան քաջը,  
Ընկաւ մեր հայոց առաջը,  
Թշնամուն յաղթեց սուրբ խաջը:

Գրիգոր մկրտեց Տրդատին,  
Մեծ թագուհի Աշխէն տիկին,

Շինեցին վանք Էջմիածին.  
Լուսաւորիչ Հայրապետին:

Տէրն այդ Սուրբ վանքը իջաւ,  
Լուսեղէն շողը ծագեցաւ,  
Հայոց համար նշան թողաւ,  
Վանքերի ձև այնտեղ եղաւ:

ՏՍՐԱՆ ԿԵՐԱՆ ՄԵՐ ԽՈՐՈՋԸ.

Կարմիր խորոզ հինգ տարեկան,  
Զայնը անուշ և դուրեկան,  
Հաւերի մէջի սիրեկան,  
Տարան կերան մեր խորոզը:

Գողացելեն մեր կտուրից,  
Կասկածում եմ մեծ քաւորից,  
Վարդան Քասպար Սարգսեանից,  
Տարան կերան մեր խորոզը:

Բողոքեցի տանուտէրին,  
Տէր Յովհաննէս քահանային,  
Եւ հարևան իշխաններին,  
Տարան կերան մեր խորոզը:



Միշտ երգում էր արագ արագ,  
Զայնը սուր էր և շատ բարակ,  
Սղփատի համար պատարագ,  
Տարան կերան մեր խորոզը:

Նման չկար ոչ մի հատիկ,  
Երեք օր ձայնից մունետիկ,  
Վարդավառի նաւակատիկ,  
Տարան կերան մեր խորոզը:

Յատուկ բերած էր մեզ համար,  
Գնահատուած էր մեծ գումար,  
Կերաւ ցորեն թամամ սոմար,  
Տարան կերան մեր խորոզը:

Ծանօթեն մեր թաղը շարքով,  
Գովում են ամէն օր երգով,  
Երկար վիզը սիրուն գիրքով,  
Տարան կերան մեր խորոզը:

Աղէքսանդրապօլու գաւառ.

Ծանօթուի՛ն. Այս գաւառի դաշտային աշխատութիւնը, վերջանումէ Սեպտեմբերի վերջին: Հոկտեմբերի կէսից շրջակայ լեռները ծածկուած են ձիւնով: Հողագործ գիւղացիք ըշտապում են ձմռան պաշար պատրասելու, սայլերով հացահատիկները փոխադրում են ջրաղացներ 10—20 վերստ հեռաւորութեան վերայ: Ընդհանրապէս նոյեմբերի մէկից վերջնական կերպով ընդհատուածէ գիւղացիների աշխատութիւնը շնորհիւ այն հանգամանքին, որ այդ օրից ըսկսած յիշեալ գաւառը ծածկուածէ ձիւնի թանձրը խաւով: Տաժանելի աշխատութիւնից ազատ չունչ քաշելով գիւղացիք, ըշտապում են հաւաքուել իրանց սովորական սենեակներում ուր և ամբողջ ձմեռ անցկացնում են Հեքեաթներով և զանազան սնտոի գրոյցներով: Մի քանի գիւղեր որոնք սեփական ջուր չունին, վեց ամիս միայն ձիւնով են կառավարուած: Իրիկնապահին ձիւնը շինում են լակի նման, գիշերը ցուրտն ամրացնումէ իսկ առաւօտեան 2—3 հոգով կարծրացած սառակոյտը, տաւարի գոմն են տանում, այն տեղ անասունների շնչառութիւնից առաջացած գոլորշիների ջերմութեան ազդեցութեամբ, սառոյցը հալուելով, սուզուածէ ջուրը քարեայ աւազաններում, որից անխտիր խմում են թէ տէրերը և թէ անասունները:



Կ ա Ր Ս Ի Գ ա լ ա ո .

Փանօթուծիւն. Ղարսի գաւառի բաւբաւը մի-  
 առեսակ չէ, որովհետեւ ժողովրդի մեծամաս-  
 նութիւնը կազմում են զանազան երկրներից  
 եկած գաղթականներ, որոնց բառբարները  
 գրական լիզուից շեղուածէ: Տաճկական  
 բառերը միացնում են հայերէնի հետ իսուն  
 ՚ի խուռն գործածումեն: Այս գաւառի գիւղե-  
 րումը չկան արհեստանոցներ և չկան արհես-  
 տագէտներ, կայ միայն նախնական ձեռով հո-  
 ղագործութիւն, որից ժողովուրդը հաղիւ կա-  
 րողանումէ քարշտալ իր գոյութիւնը այդ սակաւ  
 արդիւնքով: Իսկ անասնապահութիւնը շատէ,  
 որից ժողովուրդը չի օգտուում, որովհետեւ շատ  
 սակաւ են արօտատեղեր և չունին կաթնատնտե-  
 սութեան նոր ձևի մեքենաներ: Ամէն մի գիւ-  
 ղի տան մեծը, ձգտումէ դատաւորական շարք  
 մտնելու, եթէ նա միայն ունի մի ամսուայ  
 կենսական պաշար:

Այս գաւառումը հետեւեալ տգեղ սովորութիւնը.  
 դեռ ևս շարունակուումէ, որ պսակուող տղից.  
 աղջիկը ստանումէ 100 ռուբլի օժիտադրամ և  
 հարսանիքի երկուստեք արած ծախսը:

Թ Ի Ք Լ Ի Գ Ի Ն ա հ ա ն գ .

Վրաստանի Հայոց բնակչաց մասին.  
 Երեք քաղաք տաս գիւղ տեսայ միասին  
 Մեծից մինչի փոքրը խօսել կարգալ գրել վրա-  
 ցու պէս են.

Միայն կրօն հաւատ Հայաստանեայց անփոփոխ  
 ծէս են.

Քահանաներ քարոզ տեղական համեմատ բառ-  
 բարակ կասեն.

Գինէտներ բազում մարդիկ նստած սեղան եր-  
 գում են թասին.

Ուրախ գուարճ երկիր հարուստ աղքատ մի տեղ  
 թաւաղի դասին.

Արտաքին տեսքերով կարծեցի համեստին քա-  
 ղաքաց խասին.

Այլափոխ վարք ունին պատմութիւն թէ գի-  
 տէք տեսէք Աղասին,

Դաշտերից տուն եկող երկար ջութին դրած տես-  
 նումես ուսին.

Հողագործի գութան երկար մտրակներով դաշ-  
 տումը արշալոյսին.

Հնդկաստանի ցորեն առանց եփել թխել կերան  
 հաւասին,

Կանայքը զարգարված տարբերութիւն չկայ  
 նման միասին.



Հաստատ շարունակող գպիր Եկեղեցւոյ կարգայ  
սուրբ կոյսին:  
Որ նա բարեխօսէ գէպի իւր օրդին միակ  
Յիսուսին:

---

Մարգար Խալաթեանի կեանքի շուրջ

1912 թիւ 15-ն Օգոստոսի,

Ես ծնուել եմ 1880 թուի Հոկտեմբերի 18-ին  
Ադէքսանդրապօլու Սօգիւթլու գիւղում, որն  
գտնուում է Արագած լեռան ստորոտում արև-  
մտեան կողմից:

Իմ հայր Խալաթը մի քաջահմուտ ջուլհակ էր,  
ինքը հարուստ չէր, բայց շատ խելացի և բա-  
րի մարդ լինելով, նոյնպէս աշխատում էր հո-  
ղագործութեան հետ քաջասիրտ կերպով: Մենք  
երկու եղբայր և մի քոյր ենք եղել, օրօնցից  
փոքր ես էի: Երբ ես չափահաս եղայ, կամ այս-  
պէս ասել խելքի եկայ, սկսեցի անդադար ինքս  
աշխատութեամբ գրել և կարդալ, իսկ եկեղեցի  
գնալը, արդէն մայրս իմ երեխայութեան օրե-  
րից շարունակ, ինձ եկեղեցի տանելով, այդ սէ-  
րը մշտապէս բորբոքում էր սրտումս: Մայրս  
մահացաւ 1908 թուի փետրվար ամսում: Մեր  
գիւղը որ բաղկացած էր չորս հարիւր տանից,  
ոչ ուսումնարան կար և ոչ ուսումնական: Մե-  
ծերի պարապ ժամերը հեքեաթներով և զանա-  
զան սնտի զրոյցներով էր անցկենում:  
Երիտասարդների և երեխաների օրերը դատար-  
կաշրջելով փողոցներումն էր անցկենում:  
Մեր տան վիճակը, որ աննկարագրելի նեղ գը-



րութեան մէջ էր գտնուում, այդ պատճառաւ հայրս չէր կարողանում ինձ ուրիշ տեղի ուսումնարան ուղարկել:

Ուստի 1901 թուի մայիսի 25-ին վերառայ տեղիս ժողովրդից մի վկայագիր, ճանապարհ ելանք ես և հայրս Սևան գնալու, որպէսզի յիշեալ անապատումը լրացնեմ ուսմանս թերութեան մասը:

Մեր ճանապարհորդութիւնը մայիս ամսում, եղանակը բոլորովին խառնակ, շարունակաբար տեղում էր ցօղագին անձրև (երբ կէս օրը անցաւ) եղանակը բոլորովին այլ կերպ փոխուեց, սարերը մթնացան մառախուղը մեզ պատեց, երկինքը սկսեց գոռ գոռալ: Մեր շարունակած ճանապարհից շեղուելով դէպ հարաւ գնացինք Ղոնգախսազ քրտի գիւղումը դուրս եկանք (արևը ծագեց, եղանակը պարզեց անմիջապէս դարձանք և մեր ճանապարհի ուղութիւնը շարունակելով հազիւ կարողացանք հասնել Ապարանի Մելիքբեանդ գիւղ մօրաքրոջս տանը, այն էլ քնելու ժամին:

Հետեւեալ առաւօտը ելանք ճանապարհի դէպ արևելահարաւ կոյս անցանք ապարանից Միսխանա կոչուած ձորի խիտ անտառների միջով, լսում էինք ծառերի տերևների սօսափիւնը գագանների ոռնոցը, թռչունների երամ երամ ըն-

թանալն ու կռկռոցը, կարծես այս ամէնը ուղղելորդների ականջներին էր դիպչում:

Մեր դիմացը երևում էր բազմատեսակ բլուրներ ու մարգագետիններ, բարձր ու վիթխարի կուտակած լեռներ, որոնց տեսքը շաքարի գլխի նման սրագագաթ էին:

Յիշեալ սարերի լանջերն ապառաժայուերից վիժումէին, սառ ու վճիտ ջրեր գչգչալով խոր ձորի մէջ գետակի հետ միանալով ստանում էր իւր սահուն ընթացքը:

Մենք գնում էինք խոր ձորի միջով նեղ և առապար ճանապարհով, վերջապէս գետը անցնելով հասանք Թայչարուխ գիւղը: Այդ գիշերը մեզ հիւրասիրեց մի Գրիգոր անունով մարդ որն շատ նման էր նախահայր Աբրահամին, բարի, Աստուածասէր և հիւրասէր տեսանք: Առաւօտը մեր շարունակած ճանապարհը գնալով մինչև երեկոյ հասանք Սևանայ լճի ափ գտնուող Յամաքաբերդ գիւղը: Մտանք ջրանցքի նաւակը տասն հինգ ըրպէտում հանեց մեզ Սևան անապատը: Ներկայացանք բարձրապատիւ վանահօրը տվեցինք մեր թուղթը և յայտնեցինք մեր խնդիրը: Բարձրապատիւ հայրը, թէ և ինձ ամենասիրով ընդունեց, բայց երեք ամիս լետոյ—Սեպտեմբերի մէկին ասաց ան-



պատճառ այստեղ կլինիս և միւս աշակերտների հետ կսովորես:

Ես և հայրս վանահօր աջը համբուրեցինք իսկոյն վերագարձանք հայրենիք:

Մայրս ինձ որ տեսաւ նրա ուրախութիւնը չափից անցաւ երեսներս համբուրեց գլխիս մազերը շահեց, իսկ ես տխուր էի որովհետև վերագարձայ առանց ուսման իղձս լրացնելու:

Այդ ժամանակ սկսեցի երկրագործական աշխատութիւնս շարունակել մինչի վանահօր որոշած ամիսը հասանք, (այն Սեպտեմբերի մէկը) դարձեալ վերառայ ինձ հետ հայրս ճանապարհուեցինք Սևան գնալու, հայրս կլինէր մօտաւորապէս ութսուն տարեկան հասակի, բայց կազմը պէտքէ ասել, որ շատ լաւ առողջ և արագաքայլ մարդ էր:

Վերջապէս մտանք Սևան ներկայացանք գերապատիւ Սարգիս Սրբազան վանահօրը. (Իմ առաջուայ գնացած ժամանակ վանահայրը Եպիսկոպոսութիւն դեռ ստացած չէր, վարդապետ էր:) Սրբազան վանահայր ինձ տեսնելիս հրամայեց միաբանական աշակերտների շարքումը լինիմ: Ես մտայ աշակերտների դահլիճը ուր սովորում էին բաձրապատիւ Արեստակէս վարդապետից: Իսահլիճի մէջ տեղ գրած էր երկար գրասեղանը, ուսանողները շարուած էին

գրասեղանի շուրջը, աւանդումէին դասեր: Միջի շրջապատերի հետ կարգով դուրս ելաւ իւրաքանչիւր աշակերտի մահճակալը:

Դրան վերի շէմին գրած էր ընթերցարան և ննջարան: Երբ դասերը վերջացան դասամիջոց եղաւ Արիստակէս հայր սուրբը ինձ էլ նրանց շարքումը դասաւորեց:

Դուրս եկայ հօրս ճանապարհ գրի հայրենիք դառնալու, իսկ ես մտայ աշակերտների մօտ և ստացայ ինձ համեմատ բոլոր դասագրքերը:

Մինչև այդ ժամանակ իմ ուսման կրթութիւնը Սաղմոսի ու ժամագրքի էջէրում գիւղական հողագործների և անգրագէտ քահանաների ձեռքով էր: Այժմ սկսեցի սովորել այդ վանական խցարնակ վարդապետի մօտ, որը շատ եռանդուն ջանքերով էր սովորացնում,

Առաւօտեան ժամի վեցին սկսում էր դասեր և վերջանում էր ժամի երկուսին: Օրէնը հինգ անգամ ժամէինք ասում (երկու կանոն սաղմոս հետը), մի տարի երեք ամիս այդպէս ճըգնաժամի մէջ մնացի Սուրբ Սևան անապատը: Աշակերտների մէջ, ես էի լաւ համարւում թէ վարձով և թէ դասերով: Սևան անապատից դուրս եկայ և ամուսնացայ 1903 թուին Յունվարի 25-ն: 1905 թուի փետրվարի 2-ին ուղղւորվեցի Վրաստանի Թիֆլիզը որպէս զի ծառայութեան մըտ-



նեմ տիրացութեան պաշտօնով, բայց տարաբաղ-  
տիս ոչ մի եկեղեցում չյաջողվեց ծառայելու:  
Այդ ժամանակ Թիֆլիզում ապրումէր Քալուստ  
քահանայ Թանդիլեան որն հովուում էր Լիս և  
Նազրգոր գիւղերը, 3 ամիս յիշեալ քահանայի  
մօտ ծառայելուց յետոյ, թողեցի պաշտօնս, որով-  
հետեւ նրա ժողովուրդը թէ և կրօնով հայ են  
բայց բոլորն էլ վրացախօս էին զրանից յետոյ,  
գնացի Պուշէթ քաղաքը. Սարգիս քահանայ  
Տէր-Մարկոսեանի մօտ և շարունակեցի պաշտօ-  
նըս: Այս քահանան հովուումէր Պուշէթի շրջա-  
կայ գիւղեր (Սնանուր ձլուռ և այլն: Սարգիս  
քահանայի ազնիւ բնաւորութեան համար, չէի  
ուզում պաշտօնս թողնել, բայց ժողովուրդը  
ցվրուած և վերախօս երբ տեսայ այդ տեղից էլ  
հրաժարվեցի վեց ամիս ծառայելուց յետոյ: Ե-  
կայ Թիֆլիզ միքանի օր որոնելուց յաջողվեց  
ընդունվայ Բէթղէհէմ Սուրբ Աստուածածնայ  
եկեղեցում իբրև դպիր, Յովսէփ քահանայ Աբու-  
լեանի մօտ, այս տեղ էլ ծառայեցի եօթ ամիս  
և վերադարձայ ծննդավայր գիւղս: Երեք ամիս  
մնացի հայրենիք յետոյ վերադառնայ Թիֆլիզ  
Գրիգոր աւագ քահանայ Մանդակունույ մօտ,  
որն քաղաքի առաջի մասի գործակալն էր երեք  
ամիս ծառայելուց յետոյ, ընդունվեցի Զրկե-  
նեանց եկեղեցումը Սիմէօն քահանայի մօտ, որը

աչքերի վատտեսութեան պատճառաւ, չէր կա-  
րողանում իւր ժողովուրդը հովուել ինչպէս  
պէտքն էր: Այստեղ էլ ծառայեցի վեց ամիս  
և տեղափոխվեցի սուրբ Նշան եկեղեցում (Գրի-  
գոր աւագ քահանայ Շերմազանեանցի մօտ, սրա  
ժողովուրդը կազմուած էր Թիֆլիզի աղնական  
և ամենահարուստ դասակարգից, լաւ շահվում  
էի նիւթապէս, բայց քայքայուումէի բարոյապէս,  
այս տեղ էլ ծառայեցի տասն ամիս և վերա-  
դարձայ հայրենիք 1908 թուի մայիս ամսի 20-ին:  
Վերոյիշեալ թուին մնացի գիւղ և նորոգեցի  
մեր հին տունը իւր սրահով: 1909 թուի փե-  
տրվար ամսի 13-ին Թիֆլիզից անցնելով հասայ  
Գորի քաղաք և ընդունվեցի հնաշէն սուրբ  
Ստեփաննոս Եկեղեցում իբրև դպիր, Սահակ  
քահանայ Տէր Մինասեանցի մօտ,  
Այս քաղաքը գտնուումէր 700 տուն հայ, երեք  
եկեղեցի և հինգ քահանայ (միայն Հայոց)  
Վրացիք և մնացեալ ազգեր միաւորած ընդամէն  
երեք հազարի հասնումէր. բոլորն էլ վրաց լեզ-  
ուով էին խօսում, շատ գինէսէր են, բայց խաղաղ  
ժողովուրդ են: 1910 թուին մինչև Մայիսի կէ-  
սին որ անձրև չեկաւ Գորի. հսկում արեցին  
իւրաքանչիւր ազգը իւր ծիսով:  
Պատարագներից յետոյ Եկեղեցական Թափոր  
կատարեց քաղաքի շուրջը, նախ առաջ գնա-



ցին Վրաց հոգևոր դասը իւր ժողովրդով, նրանց հետեւեցին Հալոց Հոգևորականութիւնը ամբողջ բազմութեամբ. մի քառորդ վերստ դէպի երկաթուղու կայարանը գնալիս փողոցի վերայ ճընկաջօք Տէր ողորմեա երգեցին Նինուէ քաղաքի նման ապաշխարեցին: Քաղաքի հարաւային կողմը Մովսէսի պէս ժողովուրդը անապատ հանեցին (բլուրէ բլուր աղխախեալ էր մէկ մէկու որի վերայ քարոզ խօսացին Հոգևորական դասը. Անդաստան կատարելով մինչի քաղաքի Արևելեան կողմ եկան մի փոքրիկ ամպ դուրս եկաւ, Եղիայի օրուայ և անձրևի նման այնքան եկաւ, որ քաղաքի փողոցները հեղեղատ դարձան: Այդ ժամանակ հոգևորականներ և թէ աշխարհականներ չափազանց ուրախութեան մէջ փառք էին տալիս Աստուծոյ տուած ողորմութեան համար: Գորի ծառայեցի մի տարի երեք ամիս, վերջին հիւանդացայ ջերմամբ, որովհետև այդ տեղի օդն ու ջուրը մեր երկրի կլիմային չէր հասնում: Երկու ամիս եկեղեցու գաւթումը հիւանդ պառկեցի բայց ամուսինս շատ լաւ պահում էր ինձ, վերադարձանք Հայրենիք երեք ամիս մնալով ամբողջովին կազդուրվեցին հիւանդ մարմնիս ֆիզիքական ուժերը շնորհիւ այն սառնօրեակ ջրերի և թարմ օդի: Վերադարձայ նորից Թիֆլիզ և անմիջապէս դըպ-

րութեան պաշտօնի մտայ, Հաւլապարի Սուրբ Մինաս եկեղեցում Յարութիւն քահանայ Շախեանցի մօտ, ծառայեցի հինգ ամիս և ապա բաց թողի պաշտօնս եկայ Սօֆիւթլու: 1911 թուի փետրվար ամսի 25-ին ուղևորեցայ Երևան քաղաք քննութիւն տուեցի Թեմական դպրանոցն ստացայ քահանայութեան վկայականը, հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի 1907 թուի կոնդակին համաձայն Վկայական ստանալուց անմիջապէս համախօսական տուեցին Կարսի վիճակի Արազի գիւղի ծխականները: Ես ներկայացրի Կարսի Հոգևոր կառավարութեան, Համախօսական թերթը և իմ հաւատարիմ ծառայութեան վկայականները Սևանայ վանահօր, Տփիսիսի Բէթղէհէմ Սուրբ Աստուածածնայ, Գորուոյ Հնաշէն Սուրբ Ստեփաննոս եկեղեցույ և վերջինս թեմական դպրանոցից ստացած վրկայականը:

Կարսի Հոգևոր կառավարութեան ներկայացրի 1911 թուի մայիսի 22-ին. նոյն ամսի 25-ին ուղարկեց վիճակային կոնսիստորեային, դըժբախտ անուններիս թիւրիմացութեան համար ամբողջ վեց ամիս իմ գործը մնաց կոնսիստորեայում. իմ ծննդեան անուննէ Սիրական. լետոյ ծնողներս փոխել են Մարգար և այդ անունով են ինձ ճանաչում. զինւորագրութեան



վկայականում գրուած էր սխալմամբ Սարգիս. չօրս անունը մի թղթում գրուած էր Խլղաթ միւսում Խալաթ. Ազգս, մի տեղ գրուած էր Աւոյ միւս Աւետիս: Աեց ամիս հազիւ ուղղեցի այդ անուններիս թիւրիմացութիւնը. նոյեմբերին ուղարկեց եջմիածնի Օինօդ, Իեկտեմբերի 22 նահանգապետից ստացւեց իմ ձեռնադրութեան համար թույլտուութիւն: Զեռնադրուեցի Երևան Սուրբ Սարգիս Եկեղեցում 1912 թ. Յունվարի 21-ին Սուրբ Սարգսի տօնի օրը, ձեռնադրող Խորհէն եպիսկոպոսը իմ քահանայութեան անունը կնքեց Սարգիս և ուղարկեց ինձ ընտրող Կարսի վիճակի Արազի գիւղի ծխականներին հովուելու:

---

*Մի երիտասարդ հանգուցեալի գերեզմանի կատարած դամբանական.*

Այսօր կատարուեցաւ մի հոգևոր հանգէս, որն հանգուցեալ յիշատակի համար վերջին հոգևոր հարսանիքն է համարուում:

Խմբուած եմ տեսնում սիրելի գրացիներ և հանգուցեալի պատուական եղբայրներ, որոնք ցաւ են զգում և սգում են տխրագին կերպով, որովհետև անգուժ մահը խլերէ իրենց ձեռքից, վերահասել է անժամանակ և առանց ծերութեան անուն թողնելու: Հանգուցեալի դագաղի վերայ և մահուան առթիւ ոչ մէկը թող չտըխրի, որովհետև մահը ընդհանրականէ աղքատին և հարստին հաւասարէ ճանաչում, հզօր կայսերներին իրենց գահերից գերեզմաննէ հրաւիրում և փառքից է զրկում, իսկ Սուրբ Աւետարանը մեզ յաւիտենական յոյսէ աւետում քաջալերում է ասելով թէ մենք հեթանոսների նման անյոյս չենք, յարութիւն ենք առնելու, պիտի ժառանգենք երանաւէտ կեանքը, զրախտի փառքը, յաւիտենական յոյսը, (Եկայք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից գձեց)

(Յովհաննու Աւետարան)



Նախահայրն Ադամից մինչև այսօր գնում են մարդիք հրաւիրուծեն Երկինք Աստուծոյ աթոռի մօտ, թէպէտ նրանք մեռած են մարմնով բայց կենդանի են հոգով նրանց կենդանի Սուրբ հոգիքը միշտ բարեխօսեն առ Աստուած միջնորդեն Աշխարհի խաղաղութեան Համար: (Ելի Իհօրէ և եկի յաշխարհ դարձեալ թողում զաշխարհ և երթամ առ հայր) (Յովհաննու Աւետարանի 16-գլուխ 24 համար):

Արգեօք մարդիք մեռնելուց յետոյ մի բան թողնում են երկրի վերայ, այն թողնում են իրենց կայքն ու կալուածքը, հարստութիւնն ու փառքը. բայց դրանք բոլորն էլ շուտով կորչում և մոռացւումէ: Մի միայն բարի անուն և յիշատակնէր որ լիշուումէ հազարաւոր տարիների ընթացքում: Բարի է անուն քան զգանձըս ոսկոյ և արծաթոյ, ոսկին եթէ թաղես հողի տակ երբէք չի փթիլ, ուրեմն բարի անունը չի կորչում դարից դար լիշուումէ: Քաղաքները ըստ սովորականին ննջեցեալների դազաղները յուղարկաւորութեան ժամանակ պսակներով են զարգարում և ճանապարհն դնում յաւիտենական գնալու, իսկ մարդիկ, որ հետզետէ զարգացել են այդ պսակների փոխարէն, նպաստներ են տալիս չքաւոր դպրոցներին, որով աղքատ մտնկունքը լուսաւորեն անմոռանալի յիշատակ մնալ:

(Յաւիտենական յիշատակ արգարոց օրհնութեամբ եղիցի):

Այս տեղ Հանգուցեալի դագաղը շրջապատելեն դրացիներով բարեկամներով և ազգականներով, որոնք հանգիստ են տալիս և մխիթարանք են կա՛րգում: Յիսուսի ասած մխիթարիչ սուրբ հոգին, թող ինքը մխիթարէ բոլոր սգաւորների սիրտը:

Հանգուցեալի Հոգին թող առաջնորդէ վերին Երուսաղէմ աջակողմեան դասը, այն որ ասէ (Եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն իսկզբանէ աշխարհի) (Մատթեոսի Աւետարան 25 գլուխ 34) իսկ մնացեալ ժողովրդին կեանք և խաղաղութիւն պարգևեցէ պարգևիչն ամէն:

Խմբուած հայ ժողովուրդն և Աստուածասէր ազգ դուք աչքի առաջ ունեցէք ձեր մահը քանի դեռ կենդանի էք, Խղճերդ արթուն պահէք հեռացէք ամէն տեսակ մեղքերից, ապաշխարհեցէք զի մերձեալէ արքայութիւն Աստուծոյ: Զեր ձեռքով տուեցէք թշուառին, օգնեցէք, նա կտանի երկինք օդայի դեբը կհեռանան ձեր հոգու ճանապարհը բաց պատրաստ կլինի երկնային դրախտը մտնելու:

(Իշխանք օդոյս այս սարսեցին զօգիս սորա մի արգելցին) գրախտի փառքը ոչ մարդու աչքէ



տեսել ոչ ականջէ լսել և ոչ սիրտէ ցանկացել  
այդ փառքը պատրաստուածէ տիրոջ ազնիւ և  
հաւատարիմ ծառաների համար որոնք պիտի  
վայլեն, ինչպէս եկեղեցում և Սուրբ Աւետա-  
րանում կարդացուամէ (արդարոց կեսնք յաւի-  
տենական և մեղաւորաց տանջանք յաւիտենական):

**ՏՈՄԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Վերադիր գտնելու ձև.

Որ տարուայ վերադիրը կամենաս գտնել  
այն տարուայ թուից հան մէկ, մնացածը բա-  
ժանիր 18 վերայ: Մնացորդ թուի համապա-  
տասխան խորանում կգտնիս այն տարուայ:

վերադիր աղիւսակ.

բ.	ժգ.	իգ.	ե.	ժգ.	ը.	թ.	լ.	ժա.
իբ.	գ.	ժգ.	իե.	ժէ.	իը.	թ.	իա.	—

Եօթներեակ գտնելու ձև և իւր աղիւսակը

Ցանկացածդ տարուայ թուի վերայ աւե-  
լացրու 4 բաժանիր 28 վերայ: մնացորդ թուի

տուփի մէջ կգտնիս նոյն տարուայ եօթներեակ:

ա.	բ.	գ.	դե.	դ.	է.	ա.
բգ.	դ.	ե.	գ.	էա.	բ.	գ.
դ.	եգ.	է.	ա.	բ.	գգ.	ե.
գ.	է.	աբ.	գ.	դ.	ե.	գէ.

Տարեդիր գտնելու ձև.

Եթէ կամենաս որ և է մի տարուայ տա-  
րեդիր գտնել, այն տարուայ վերադիր ճշտապէս  
գտիր և հան 46-ից, որին անուանում են հա-  
նապագորդական թիւ, եթէ 31-ից աւելի է  
մնում մարտ ամսի 31 օրերը դուրս հան. մնա-  
ցած թուի վերայ աւելացրու ամսական և նոյն  
տարուայ եօթներեակ այդ գումարը բաժանիր  
եօթի վերայ մնացեալը լրման օրէ եթէ մէկ  
մնաց կիրակիէ, երկուս երկուշաբթի իւր կարգով  
մինչև շաբաթ օրը: Լրման օրից յետոյ, տես  
քանի օր կայ մինչև կիրակի այնքան օր աւե-  
լացրու աւագ լրման վերայ ամսի այն քանին  
գատիկէ: Ձատկից հան քսան և մէկ, մնացեալը  
տարեդիրէ, թէ 1 մնաց տարեդիրը ա. տասէ  
թէ 2 մնաց բ. տասէ, այսպէս կարգով բարձ-



քանուժէ իսկ Ք տառը և փ. տառը մի աստիճան ունին:

Յ ա յ տ ն ու թ ե ա ն օ ր գ տ ն ե լ ու ձ և ր.

1. Զրօրհնեաց օրը յունվարի 6-ինէ տարեգրից հան 7—7 մնացեալը երեք շաբթէ օրից լետ տուր, ինչ աւուր վերայ դադարեց յայտնուած օրէ:

2. Զրօրհնեաց առաջաւորաց միջոց ուտիք տարուայ տարեգրի վերայ աւելացրու հինգ—գումարի չափէ:

3. Առաջաւորաց բարիկենդան: Տարեգրին արելացրու 10 յունվարին տուր եթէ 31-ից աւելէ յունվար ամսի օրեր դուրս հան մնացածը փետրվարի մէկից հաշւիր:

4. Տեառնդ առաջի օր փետրվարի 14: Տարեգրից հան 7—7 մնացեալը շաբաթ օրից լետ տուր:

5. Բուն բարի կենդան: տարեգիր քանի է փետրվարի այնքանին է:

6. Զատիկ: տարեգրին աւելացրու 21 տուր մարտին:

7. Աւետիքի օր գտնել: Տարեգ. հան 7—7 մնացեալը երեքշաբաթ լետ տուր,

8. Երևման խաչ: Տարեգ. աւելացրու 18

ապրիլին տուր:

9. Համբարձում: Տարեգրից հան մէկ մայիսին տուր:

10. Հոգեգալուստի Տարեգրին աւելացրու 9. Մայիսին տուր:

11. Ս. Գրիգորի բարեկենդան տարեգրից հան 1 Յունիսին տուր:

12. Վարդավառ, տարեգրից հան 3 մնացեալ յուլիսին տուր:

13. Վարդավառի և Աստուածածնայ միջոց ուտիք պահօք երբ որ տարեգիր լինումէ ա. բ. գ. միջոցը եօթ շաբաթէ, երբ տարեգիր լինումէ դ. ե. գ. է. ը. թ. ժ. միջոցը 6 շաբաթէ: Երբ որ տարգ. ի. լ. խ. ճ. կ. հ. ձ. — 5 շաբաթէ: Երբ տարեգ. դ. ճ. մ. յ. Ն. շ. ո. լինումէ միջոցը 4-շաբաթէ երբ տարեգիր չ. պ. ջ. ո. ս. վ. տ. լինումէ միջոցը 3 շաբաթէ: Երբ լինումէ տարեգիր ր. ց. լ. փ. ք. միջոցը 2 շաբաթէ:

14. Աստուածածնայ տօն գտնել: Տարեգրին աւելացրու 4. հան 7—7 մնացեալին աւելացրու 11 օգոստոսին տուր,

15. Աստուածածնի և սուրբ խաչի միջոց ուտիք շաբաթապահօք գտնել. Տարեգրին աւելացրու 2 հան 7—7 մնացեալ եթէ լինի 6-7 5 շաբաթէ, եթէ այլ թիւ լինի 4 շաբաթէ:



16. Սուրբ խաչի տօն գտնել: Տարեգրին աւելացրու 2 հան 7—7 մնացեալին աւելացրու 10 սեպտեմբերին տուր:

17. Սուրբ Գէորգայ բարեկենդան: Տարեգրին աւելացրու 2 զումարից հան 7—7 մնացեալին աւելացրու 17 սեպտեմբերին տուր:

18. Սուրբ Գէորգայ և գիւտ խաչի միջոց ուտիք շաբաթ պահք գտնել: Տարեգրից հան 7—7 եթէ մնոց 6—7 ուտիքը ութը շաբաթէ, թէ ուրիշ թիւէ մնացածը 7 շաբաթէ:

19. Գիւտ խաչի տօն 2 աւելացրու տարեգրին. հան 7—7 մնացեալին աւելացրու 22 Հոկտեմբերին տուր:


20. Յիսնակաց բարեկենդան, տարեգրից հան 7—7 մնացեալն աւելացրու 14 Նոյիմբերին տարին:

21. Սուրբ Յակոբայ բարեկենդան գտնել տարեգրից հան 7—7 մնացեալն աւելացրու 5 դեկտեմբերին տուր:

22. Սուրբ Յակոբայ և ծննդեան պահոցի միջոց ուտիք գտնելու ձև: Տարեգրից հան 7—7 իսկ մնացեալը հան 19-ց, որքան մնաց այնքան օրէ:

23. Բարեկենդան ծննդեան պահոց գտնելու ձև Տարեգրից դուրս հան 7—7 մնացեալը ևրեք շաբաթի օրից լետ տուր, ինչ օրուայ վերայ դադարեց այն է:

Handwritten signature or mark in the upper right corner.





APM.  
2-751a

10477

12411

*Handwritten signature or initials*



2073



